**ՔԱՂՎԱԾՔ**

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.02.2019թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արտյոմ Գրիգորյանը, Արմեն Մափինյանը, Վահագն Ավագյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Սեյրան Ղամբարյանը, Արման Ափինյանը, Խորեն Վարդանյանը,Վահե Դոխոյանը:*

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արևիկ Լոքյանը, Սեյրան Աղաբեկյանը*:

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կռոյանը, Անահիտ Կարապետյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ՝ *Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ապերյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստից բացակայում էին՝

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

*Համիկ Խլղուպուզյանը, Տիգրան Նազարյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Սուրեն Կարապետյանը, Կարինե Մայիլյանը, Էդգար Սարգսյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.10-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2019 թվականի 6-րդ նստաշրջանի 15.02.2019թ. ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է (www.vanadzor.am կայքի գլխավոր էջում):

Մինչ նիստի օրակարգին անցնելը Մամիկոն Ասլանյանը Վանաձորում Կոմիտասի և Թումանյանի 150-ամյակների տոնական միջոցառումների շարքը հայտարարեց բացված՝ շնորհավորելով բոլորին հայ Մեծերի հոբելյանների առթիվ: Ավագանու անդամ Անահիտ Կարապետյանն առաջարկեց օրակարգից դուրս քննարկել ավտոկայանատեղիների հարցը՝ նշելով, որ խմբակցության անդամներն ուսումնասիրել

են մի շարք պայմանագրեր և գտել որոշակի բացեր: Վերջինս առաջարկեց հանձնաժողով ձևավորել և հարցն ուսումնասիրել այդ տիրույթում: Համայնքի ղեկավարը վստահեցրեց, որ քայլեր կձեռնարկվեն խնդրի լուծման նպատակով: Մամիկոն Ասլանյանը պարզաբանեց նաև այն հարցը, որ 2016 թվականի հոկտեմբերից ի վեր Վանաձորում վճարովի ավտոկանգառ կազմակերպելու համար որևէ մեկի հետ պայմանագիր չի կնքվել:

Ռուսաստանաբնակ գործարար Արամայիս Մեսրոպյանի ներկայացուցիչն էլ ավագանուն ներկայացրեց ներդրումային ծրագիր, որով նախատեսվում է համայնքից գնել Դիմաց թաղամասի լողավազանը՝ այն ժամանակակից պահանջներին համապատասխան վերակառուցելու և հանրությանը մարզական ծառայություններ մատուցելու նպատակով:

Համայնքի ավագանու անդամ Ա.Մատինյանը նշեց, որ հաշվի առնելով ժողովրդի սոցիալական վիճակը, նաև բյուջեի այսօրվա հնարավորությունը, նպատակահարմար չէ արդյոք բարձրացնել համայնքապետարանի և դրա ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերը: Համայնքի ղեկավարը նկատեց, որ եթե վերջնականապես հանգենք այն եզրակացության, որ աշխատավարձ բարձրացնելով, հաջորդ տարի պարտք չի առաջանա, պարտադիր այդ հարցին կանդրադարձվի ու հնարավորինս դրական լուծում կտրվի:

Համայնքի ավագանու անդամներին նաև ներկայացված էր, որպես ի գիտություն, 2018 թվականի երկրորդ կիսամյակում Վանաձոր համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով իրականացված ծրագրերի մասին հաղորդում: Նշված ժամանակահատվածում շուրջ 8.7 մլն դրամ է հատկացվել Վանաձորի բնակիչներին բնակարանային վարձավճարների տրամադրման, սպորտի բնագավառի մարզիկներին և մարզիչներին տրամադրվող աջակցության, սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող աջակցության, վետերանների Վանաձորի մասնաճյուղի խորհրդին աջակցության և ՀՀ պաշտպանության և մարտական գործողությունների ժամանակ զոհված զինծառայողների և ազատամարտիկների ընտանիքների ջեռուցման ծախսերը մեղմելու նպատակով աջակցության նպատակով:

Նիստը վարողն առաջարկեց օրակարգից հանել 12-րդ կետը, որը վերաբերում է թիվ 40 մանկապարտեզի հաստիքացուցակների փոփոխությանը, և քվեարկել օրակարգը նոր խմբագրությամբ:

**Կողմ՝ 28, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:**

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

   զեկ. Վ.Գրիգորյան

2. Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին

   զեկ. Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Ա.Հովհաննիսյան

4. «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությանը գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

5. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս.Աբովյան

6. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Իսահակյան 10 հասցեում գտնվող 0.1415 հա մակերեսով 06-001-0741-0037 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

զեկ. Ս.Աբովյան

7. Վանաձոր համայնքի Տարոն-2, ՔՇՀ-4 թաղամաս թիվ 2-10/1 հասցեում գտնվող խանութ-տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Քրիստինա Լյովայի Վարդանյանին օտարելու մասին

զեկ. Ս.Աբովյան

8. Արսեն Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-3 թաղամասի թիվ 6/1-4 հասցեում գտնվող հողամասը Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 22-րդ փողոց թիվ 1-3 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին

զեկ. Ս.Աբովյան

9. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

10. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

11. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ.Բաղյան

12. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

1. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 29–ի թիվ 129-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 27, ձեռնպահ՝ 1 /Ա.Կարապետյան/, ընդունվեց որոշում:**

2. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերի հաստատման մասին:

Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 21, դեմ՝ 4 /Ք.Մարուքյան, Հ.Սիմիկյան, Վ.Կռոյան, Ա.Կարապետյան/, ձեռնպահ՝ 2 /Կ.Ղուկասյան, Ռ.Մարգարյան/, ընդունվեց որոշում:**

3. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 29-ի թիվ 28-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արեվիատ Հովհաննիսյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

4. **ԼՍԵՑԻՆ** - «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպությանը գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի Եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնի պետի տեղակալ Կարեն Սարոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

5. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Արոյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

6. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի վարչական սահմաններում՝ Իսահակյան 10 հասցեում գտնվող 0.1415 հա մակերեսով 06-001-0741-0037 ծածկագրով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

7. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի Տարոն-2, ԲԾՀ-4 թաղամաս թիվ 2-10/1 հասցեում գտնվող խանութ-տաղավարը և դրանով զբաղեցված հողամասը ուղղակի վաճառքի ձևով Քրիստինա Լյովայի Վարդանյանին օտարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:**

8. **ԼՍԵՑԻՆ** - Արսեն Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող Վանաձոր քաղաքի Տարոն-2, ԲԾՀ-3 թաղամասի թիվ 6/1-4 հասցեում գտնվող հողամասը Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 22-րդ փողոց թիվ 1-3 հասցեում գտնվող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ Սուրեն Աբովյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 24, ընդունվեց որոշում:**

9. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

10. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

11. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 105-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

- Զեկուցեց համայնքապետարանի Մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

12. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2019 թվականի մարտի 19-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 25, ընդունվեց որոշում:**

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2019 թվականի մարտի 19-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 11.00-ն:

Նիստի վերջում համայնքի ավագանու անդամ Վահագն Ավագյանն առաջարկեց ձևավորել աշխատանքային խումբ, որը խորհրդատվական աջակցություն կցուցաբերի համատիրություններին և կուսումնասիրի նրանց կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ — ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց — Է. Հովսեփյանը